բանից և վիճմանց, տեսեալ Ցունաց թէ անհնարին է հատանալ Հայոց փոքու իւիք, այլ յեցեալ կան 'ի բանս հրովարտակին և 'ի բառն բաժանորդ, յանձն առին լինել հաւասար ընկեր ընդ Հայոց ամենայն իրօք 'ի նոյն տեղի որպէս հրամայեալ էր Արքայի։ Ցետ այնորիկ սկիզբն արարին յերկաթի արտաքին դրանէ մինչ 'ի գերեզմանն և 'ի շրջապատս նորին եւ յայլ տեղիս, բաժանեցին զամենայն ինչ հաւասարութեամբ, և եկեալ պատմեցին Դատաւորաց թէ կատարեցաւ ամենայն ինչ բաց 'ի պատարագէն, եւ թողին զայն խօսիլ 'ի վերայ այնր յայլուս պահու, և մեկնեալ անտի գնաց իւրաքանչիւր ոք 'ի տեղի իւր։ Եւ յաւուրն չորեքշաբաթու ըստ առաջին սովորութեան պատարագեցին Հայք 'ի վերայ Գերեզմանին Ս. Աստուածածնի ('ի 19 Նոյեմբերի) եւ զկնի Պատարագին կախեցին կանթեղս, ջահս, պատկերս, վարագոյրս և զայլ ամենայն սպասս եկեղեցւոյ հաւասար Ցունաց թէ յեկեղեցին և թէ 'ի Գերեզմանն, զթիւս և զորքանութիւնս նոցին, տես 'ի պատմութիւնս Դիոնէսիոս վարդապետի ձեռագիր, երես 191։ Իսկ Գերեզմանքն Ցովակիմայ և Աննայի ծնողացն Ս. Աստուածածնի, որ էր 'ի միջնատեղի աստիճանաց յարեւելեանկաւ 'ի բաժնին Ցունաց, յոր յաւուր տօնի սրբոցն Հայք առնէին նախատօնակ եւ պատարագ հրամանաւ Ցունաց, այժմ բարձաւ այս սովորութիւն 'ի տհաճութենէ Ցունաց։ Եղին պայման աւելածութեան, մի շաբաթ Ցոյնք եւ մի Հայք. գնացին դարձեալ Հայք և Ցոյնք յատեան Դատաւորին, ուր էին Նուրի Էֆէնտի, Բաղաքապետն եւ այլք, և 'ի լինել բանից վասն պատարագին Հայոց, ասացին Դատաւորք երթալ երկուց ազգաց 'ի միասին խորհիլ և տնօրինել։

Ցառանձնանալ գլխաւորաց երկուց կողմանց, Ցոյնք ասէին բառնալ և կամ բաժանորդ առնել զուղղաձիգ շրջթայն 'ի հարաւոյ 'ի հիւսիս առաջի դրան գերեզմանի Ս. Աստուածածնի, յորոյ վերայ էին 3 կանթեղք Հայոց, և կամ կախել փոքր շարան տախտակի առաջի խորանին Հայոց. և բառնալ զկամարաձեւ շարանն որ առաջի խորանին, եւ կախել 'ի կարգի չորից շարանաց հաւասար Ցունաց, ընդ այս հաճեցան Հայք։ Եւ ապա բան արկեալ խօսեցան